Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8 891.99ա
2-15

ՅՈՒ. ՂԱՅԱՐԵԱՆ

Ղուկաս Տարագ
Գրքերի խանութ
Տ. Լ. 3

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԵՄ

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

I.

ՀԱՎԱՏԸ

Վոգ. մեկ արարածով

II.

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԽԱԹԱՑ ՉԷ

Կատակերգ. մեկ արարածով

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԱՅ
ԱՄՈՒՍԱՆԻ ՈՒԽՏ
ԳՐՔԱՍԻՆ ԵՎ ԱԶԳԱՐԱՆԻՑ
18 ՀՈՒՆՍ. 1918 Թ. ԹԻՖԼԻՍ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Վարդանեանի
Тип. М. Вартанянца, Вельямин. ул. № 7.
1901

30 MAY 2011
891.99(5)
Հ-15
ԱԿ.

ՅԱԿ. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԵՄ

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԿԵՆԱՆԳԻՑ

I.

ՀԱՎԱՏԼԱ

Վեպ. մէկ արարածով

II.

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԽՍԹՍՑ ՀԷ

Կատակերգ. մէկ արարածով

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանի

Типог. М. Вартанянца, Вельямин. ул. № 7

18 JUN 2013

Доз. ценз. Тифлисъ, 11 Августа, 1900 г.

ՀԸ ՎԸՂԼԸ

ԿԱՏԱԿ. ՄԷԿ ԱՐԱՐԻԱԾՈՎ

Առաջին անգամ խաղացել են Ռաչել Մարիամեան Դպրոցի աշակերտուհիները 1900 թ-ին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Տիկ. Արշալոյս, վարժուհի—Երանուհի Գալստեան
Տիկ. Գոհարիկ, բամբասասէր—Աննա Հայրապետեան
Տիկ. Վարսենիկ. պարզ կին—Վիկտորիա Ներսիսեան
Նաբաթ-բաջի, պառաւ կին--Արաքսիա Կարապետեան
Շուշանիկ, 9-ամեայ աշակ.—Հռաշանիկ Յակոբեան

Բեմի ներկայացումն է տիկին Գոհարիկի ձոխ զարդարուած ընդունարանը

ՏԵՍԻԼ Ա.

Տիկին Գոհարիկ նստած կար է անում: Մըտնում է Շուշանիկ վրդովուած եւ գրքերը սեղանի վերայ շպրտելով, քաշւում է մի կողմ, թաշկինակով աչքերը ծածկում։

ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐԻԿ

Հը՛, Շուշանիկ, ինչու՞ ուշացար, ի՞նչ է, դու տխուր ես, ի՞նչ խաբար է։ Երևի էլի պատժուած ես եղել: Չեմ հասկանում այդ ՝ՆԸՑՉՄԸ ի՞նչ է ուզում մեզանից։ Ես նկատում եմ, որ դա ամեն կերպ աշխատում է մեզ վնասել, խայտառակել: Այս բոլորը հայրիկիդ մեղն է. ես չէի ուզում քեզ ուղարկել

այդ քամբախ վարժատունը, բայց. . . (Դէպի ժողովուրդը) Աբա իմ աղջիկը գնայ շիրաչինների աղջիկների կողքին նստի և այն էլ փոխանակ շնորհակալ լինելու՝ այդպէս վարւեն: Էլ չեմ ուղարկի քեզ, որդի, լաց մի լինի:

ՇՈՒՇԱՆԻԿ

Դիտես, մայրիկ, էդ վարժուհին չըգիտեմ ինչու, միշտ Արաքսի կողմն է պահում, նա շարութիւն է անում, գալիս ինձ է պատժում: Այսօր ես ոչինչ չէի արել, միամիտ նստած՝ դաս էի սովորում, իսկ Արաքսիան և Սրբուհին իրար հետ կատակներ էին անում, էլ չըգիտեմ ինչպէս եղաւ, տիկինն եկաւ ինձ պատժեց և ճաշից զրկեց:

ԳՈՀԱՐԻԿ

Լաց մի լինիր, Շուշանիկ ջան, լաց մի լինիր, ես քեզ այլ ևս չեմ ուղարկի, բայց և այն քանդւած դպրոցն էլ տակն ու վրայ կանեմ: (Դուրը դրսից ծեծում են եւ ապա մտնում Արշալոյս, Վարսենիկ, Նաբաթ-քաջի):

ՏԵՍԻԼ Բ.

ԳՈՀԱՐԻԿ (նրանց դիմաւորելով)

Բարև, բարև, համեցէք: Օ՜հ, տիկին Արշալոյս, դուք էլ շնորհ բերիք, որքան ուրախ

եմ: Աստուած վկայ, տիկին ջան, ես քեզ այնքան եմ սիրում, որ էլ չեմ կարող ասել: Տիկին ջան, ինչու ախաբ էդպէս ուշ-ուշ ես գալիս մեզ մօտ, այն մի վարժուհին շաբաթ չէր անցնի, որ մեզ մօտ չըգար: Շատ անգամ, իր տան պէս, թէյ էր լցնում, բաժանում:

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ (ծիծաղելով)

Ներողութիւն. տիկին, ես միջոց չունիմ մեր տանն անգամ թէյ լցնելու, ուր մնաց թէ ուրիշի տանը: Շնորհակալութիւն ձեր հիւրասիրութեան համար: Ես էլ շատ ցանկանում եմ երբեմն այցելել աշակերտուհիներիս տները, բայց, հաւատացած եղէք, միջոց չունիմ, անչափ զբաղւած եմ:

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Դէ բա ինչ ա. խեղճերն առաւօտից մինչև երեկոյ զբաղւած են մեր երեխաներով, իսկի մաջալ ունին: Տիկին ջան, ուր կուզես գնաս կամ չըգնաս,—տիկին Գոհարիկի հետ պէտք է լաւ բարեկամ լինիս. հօ գիտես, նա որ ուզենայ՝ այնպէս իրար կըխառնի, որ բոլոր ծնողներն իրանց աղջիկներին դպրոցից դուրս կըտանեն, կըմնաս դու մենակ:

Տ. ԳՈՀԱՐԻԿ (աչքերը ծռմռելով)

Վարսենիկ, էլի սկսեցիր կատակներդ:

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Կատակ չեմ անում. եանի ճիշտ չեմ ասում, Նաբաթ-բաջի:

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա, վա՛յլա, դիւզն ես ասում։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Էդ ի՞նչ ես ասում, Նաբաթ-բաջի, ես խառնակիչ եմ։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Ստուած մի՛ աբասցէ, բալամ, դու էլ ես դիւզն ասում։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ (հեգնօրէն)

Ես էլ եմ դիւզն ասում, նա էլ է դիւզն ասում, դու էլ ես դիւզն ասում. հա՜ հա հա՜ . . .

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ (միամտօրէն)

Հա վա՛յլա, հա՛։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Ես խօսքի հետ ընկայ, մոռացայ ձեզ հիւրասիրել. գնամ զահւայ բերեմ։ Հա՛, լսե՛լ էք, ասում են տիկին Վարդանուշը իր մարդու հետ կռւել է, ի՞նչ աղմուկներ. ի՞նչ զալմազներ։ Տիկին Մարգարտի աղջկայ օյիններն իմացել էք. ասում են մօրն այնպիսի պատասխաններ է տւել, որ չեմ կարող ասել. եղբայրն էլ փայտով զարկել է, փայտը կպել

է աչքին, աչքն ուռել, քիչ է մնացել կուրանայ։ Կայէք գնամ—գամ տիկին Հայկանուշի բաներն էլ պատմեմ։ (Գնում է) Ղահրաման, Ղահրաման, դահվադանը բեր։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Էս տնաշէնը տանից դուրս չի գալիս, բայց ի՞նչ նոր խաբար կուզես՝ գիտէ։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՛յլա . . .

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Որ եկել է պիտի հարցնեմ՝—ասում են թէհրանում մի մարդ են կախել, ճի՞շտ է։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Վարսենիկ, էր ես շուխի անում, համ մարդու տանը զօնախ ես, համ էլ ձեռք ես առնում։ Հա վա՛յլա, հա՛ . . .

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ (հեգնօրէն)

«Հա վա՛յլա», ի՞նչ հասկացար, որ՝ հա վա՛յլա։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Դէ ասում եմ լա՛ւ կանես, էլի։

(Ներս է մտնում տիկին Գոհարիկ)

ՏԵՍԻԼ Գ.

Տ. ԳՈՀԱՐԻԿ (մատուցանելով սուրճ)

Հը՜, Վարսենիկ, էլի ինձ ես բամբասում։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Չէ, այդ պաշտօնը քեզանից ես երբէք չեմ խլի, միամիտ կաց:

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Համեցէք, համեցէք։ Հա, գիտէք ինչ, հա, տիկին Հայկանուշը Հաշտարխանից իրան համար մի նոր-մօդնի դէյրա է բերել տուել, շատ ծիծաղելի մի բան, – ետևը կուչ եկած, կուրծքը մի ինչ-որ հասարակ լէնտով նաշխած, հա, շատ ծիծաղելի մի բան:

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Վա՜յ, մեղա՛յ Աստծու, հա վա՛ղլա:

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ (հեգնելով նրան)

Հա՛, ասում են ետևի փեշիցն էլ մի աղէսի պոչ է կարած, այնպէս չէ՞, տիկին Գոհարիկ:

Տ. ԳՈՀԱՐԻԿ (լրջօրէն)

Այդ չէ, բայց ասում են աղէսի պոչը վերարկուի օձիքին է դրած։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Տեսա՞ք... Ա՛յ քեզանից բաներ կըհնարես հա։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՛ղլա...

Տ. ԱՐՇԱԼՈՒՍ

Ներողութիւն, տիկին Գոհարիկ, ես իսկապէս այսօր չըպիտի կարողանայի դալ ձեզ

մօտ, եթէ մի կարևոր հանդամանք չըստիպէր ինձ։ Գիտէք, ես չափազանց դժգոհ եմ ձեր Զուշանիկից։ Նա ոչ դասերն է կանոնաւոր պատրաստում, ոչ օրինաւոր դպրոց է գալիս և ոչ էլ դպրոցում կարգին պահում իրեն: Խնդրում եմ տանը մի փոքր ուշադրութիւն դարձնէք նրան։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Չէ, տիկին ջան, մենք մեր երեխայոց ուրիշների նման չենք պահում, այդ կողմից միամիտ կաց։ Միայն, խնդրում եմ, տիկին ջան, իմ աղջկան մի առանձին նստարանի վերայ նստացնես, չիրաչի Սահակի աղջկայ մօտ չընստացնես։ Ի հարկէ, նրա մօտ նըստելով՝ Զուշանիկս նրանից ինչ պիտի սովորի։ Տեսնենք ես նրա մօր թա՞յն եմ, որ նրա աղջիկն իմ աղջկաս թայը լինի։ Խընդրում եմ, տիկին ջան, Զուշանիկիս այլևս նրա մօտ չը նստացնես։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՛ղլա, հա՛...

Տ. ԱՐՇԱԼՈՒՍ

Երևի ձեր խօսքը Մարգարեան Սրբուհու մասին է. տիկին Գոհարիկ, դուք շատ գոհ պիտի լինիք, եթէ ձեր աղջիկը նրա կիսի չափ

լինի։ Իմ ինչ գործն է, թէ նրա հայրը շի-
բաչի է կամ կօշկակար,—բաւական է, որ
նա աշխատասէր, բարի և ընդունակ աղջիկ է։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՛ղլա, հա՛...

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Տիկին ջա՛ն, ախար դու չես իմանում, նրանց
աղջիկը շատ փչացած աղջիկ է, չընհաւատաս
Նրան, սուտ ճգնաւոր է ձևանում։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ներողութիւն, ես շատ լաւ եմ ճանաչում իմ
աշակերտուհիներիս, այդ երկուսի մէջ սա-
ռեր կան։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Օրինակ՝ այսօր պատժել էք Զուշանիկիս.
խեղճ երեխաս երդւում է, թէ ինքը միամիտ
նստած՝ դասերը սովորելիս է եղել, իսկ Ա-
բրաքսիան ու Սրբուհին չարութիւն են անե-
լիս եղել, դու եկել ու Զուշանիկիս ես պատ-
ժել։ Ախար էդպէս չի կարելի, տիկին ջա՛ն։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՛ղլա, հա՛։

Տ ԱՐՇԱԼՈՅՍ

Ես իմ պարտականութիւնս լաւ եմ հասկա-
նում, խնդրում եմ դուք ինձ չսովորեցնէք և

իմ գործերին չըմիջամտէք։ Ես ձեզ խորհուրդ
եմ տալիս, որ ուղղէք ձեր աղջկան, իսկ դուք
զանազան պատճառաբանութիւններով կա-
մենում էք արդարացնել նրան։ Ուզում էք
ուղիղն ասել,—ձեր աղջիկը մի փչացած աղ-
ջիկ է, և, եթէ այդպէս շարունակելու լինի,
ես պարտաւորուած կըլինիմ նրան դուրս վը-
ռընդել դպրոցից։ (Դառնալով միւսներին)
Երևակայեցէք, այնպիսի լպիրշ խօսքեր է
ասել Սրբուհուն, որ ես մնացի ապշած։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Դուցէ, տիկին ջա՛ն, աշակերտուհիները քեզ
խաբել են։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Հէնց նա ինքը խոստովանեց։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Իսկ ինձ բոլորովին ուրիշ կերպ է պատմել։
Երևի վախից է ձեզ այնպէս ասել։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ես մեղաւոր չեմ, եթէ նա ձեզ կարողացել է
խաբել։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Լա՛ւ, տիկին ջա՛ն, մի՛ նեղանար, երեխայ է։
Հա՛, տիկին ջա՛ն, ինչո՞ւ վերարկուդ չես հա-
նում, շատ չես դալիս մեր տուն, որ այն էլ
վերարկուով ես նստում։ Խնդրում եմ...

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ո՛չ, ներողութիւն, գործ ունիմ, շուտով պէտք է գնամ, այսպէս էլ լաւ է։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Զէ՛, տիկին ջան, խնդրում եմ, շատ եմ խընդրում, համեցէք միւս սենեակը՝ հանուեցէք. խնդրում եմ։ (*Տիկին Արշալոյսը գնումէ, իսկ Գոհարիկը երկու ձեռքով հանչելով*) Առա՛ է, տալը մտնես . . .

ՏԵՍԻԼ Դ.

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Հը՛, տիկին Գոհարիկ, քո աղջիկը իսկի չարութիւն չի անիլ, չիրաչինների ու աղքատների աղջիկները միայն չար, անպիտան կըլինին, բաս ինչպէս էր . . .

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Է՛հ, հողը դրա գլխին, սուտ է ասում, կողմնապահութիւն է անում. բա իմ աղջիկն ու չիրաչի Մարգարենց սեուկ աղջիկը մէկ են։

Տ ՎԱՐՍԵՆԻԿ

Ես որ ասում եմ երկու երեսանի սաջի հաց ես. ինչու՞ քանի նա այստեղ էր՝ այդպէս չէիր խօսում։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Կարծում ես նրանից վախենում եմ. նա է

մեր ձեռքին նայում, մենք հօ նրա ձեռքին չենք նայում։ Մի շաբաթ շըկայ՝ մի բուռը փող ուղարկեցի, մի կտոր թուղթ էր տուել երեխիս ձեռքը,—փոշէ է, ինչ զահրումար է։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Տիկին Գոհարիկ, դէ դու էլ գիտես որ քո աղջիկը չար է, էլ ինչու՞ ես . . .

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Դէ դուք էլ էդպէս էք անում, որ դա երես է առնում։ Էլ ո՞չ հարուստ կայ, ո՞չ աղքատ. գեղդա-գիւղաների աղջիկներին առաջ են քաշում, մերոնց՝ յետ տալիս։ Եարաբ էս մատթահը որ ջհանդամից եկաւ-ընկաւ այստեղ է՞։ (*Ներս է մտնում տիկին Արշալոյսը։ Տիկին Գոհարիկը վազելով եւ ձեռքը ձգելով նրա ուսին*) Եկա՞ը, տիկին ջան, արի՛, համեցէք, տիկին ջան, երանի իմանաս, թէ ես քեզ ինչքա՞ն եմ սիրում։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Վա՜հ, կեղծաւորութիւնն էլ էդպէս աշկարա՞։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՜ղլա . . .

Տ. ԳՈՀԱՐԻԿ (*աչքերը ոլորելով նրանց վերայ եւ դառնալով տիկին Արշալոյսին*)

Դէ՛, ասիր տեսնենք, տիկին ջան, այդպէս

մեր երեխաները քեզ նեղացնում են . . . Է՛հ, վնաս չունի, տիկին ջան, երեխաներ են, կըմեծանան՝ կը խելօքանան։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ո՛չ, սխալւում էք, երեխային փոքր հասակում աւելի հեշտ կարելի է ուղղել և նրան դաստիարակողը պիտի լինին դպրոցը և ընտանիքը միաժամանակ, առանց մէկի՝ միւսը չի կարող շատ գործ կատարել։ Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ դպրոցը, եթէ այնտեղ սովորածը՝ տանը ջուրը պիտի դնեն։ Իսկապէս, տիկին Գոհարիկ, ես շատ դժգոհ եմ ձեզանից. ես հաւատացած եմ, որ այն լպիրշ խօսքերը, որ Զուշանիկը դպրոցում կրկնել է,—կարող էր միայն ձեզանից լսած լինել, կարող էր միայն տանը սովորել և ուրիշ ոչ մի տեղ։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Ուռա՛. . . Հա՛, տիկին ջան, ես մի պարզախօս կին եմ, ամեն ինչ ճիշտը կասեմ, դա, ինչ էլ լինի, խօսում է երեխաների մօտ, և, իհարկէ երեխաներն էլ կը սովորեն։ Օրինակ՝ անցեալ անգամ ես այստեղ էի, սա ու իրանց խնամի Նարդիզը այնպիսի բաներ էին խօսում, ծիծաղում, որ չեմ կարող ասել։

Զուշանիկն էլ նստած՝ լսում էր, երբեմն էլ քաղցը-քաղցը մասնակցում ծիծաղին։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Դէ դու է՛լ, Վարսենիկ. նա ի՞նչ էր հասկանում մեր խօսածներից, մենք ծիծաղում էինք, նա էլ, երեխայ է, տեսնում էր ու ծիծաղում։

(Տիկին Վարսենիկը մօտենում է ու փսփսում տիկին Արշալոյսի ականջին)

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Հէնց այդ մի և նոյն լսածներն էլ դպրոցում ասել էր Սրբուհուն . . . Տեսա՞ք, տիկին Գոհարիկ, երեխան մի միմոս է, ինչ-որ տեսնի՝ այն էլ կը սովորի, ինչ-որ լսի՝ այն էլ կը խօսի։ Տեսնում էք, որ դպրոցի շինածը՝ դուք տանը քանդում էք։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ

Հա վա՛յլա . . .

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Չէ՛, տիկին ջան, մենք մեր երեխաներին ուրիշների նման . . . (Մտնում է Զուշանիկ)

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Զուշանիկ, մօտ եկ։ Մի բան պէտք է հարցնեմ քեզանից, եթէ ուղիղն ասես՝ կը ներեմ, և, եթէ խոստանաս այլևս չը կրկնել,—քեզ շատ

կը սիրեմ։ Ասիր տեսնեմ, այն անպիտան խօսքերը, որ ասել էիր Սրբուհուն, ումնէ էիր սովորել։ Նու, ասիր, խոստանում եմ ներել, միայն ուղիղը պիտի ասես։ (*Շուշանիկն երբեմն աչքի տակով նայում է նրան և կրկին գլուխը խոնարհում*)։ Դէ, ասիր, մի վախենար. հը՞, ինչ ես լռում, չես ասում։

ՇՈՒՇԱՆԻԿ

Մայրիկս ու Նարգիզ տօտէն խօսում էին՝ ես էլ լսեցի։ (*Դուրս է փախչում*)։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Տեսա՞ք, տիկին Գոհարիկ։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Հը՞, «իմ աղջիկն ուրիշի աղջկայ թայը չէ՞», ինչպէս էր . . .

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Դէ ինչ անենք, տիկին ջան, մի բան պիտի խօսենք, թէ՝ պիտի լռուենք, մունջ դառնանք։ Փառք Աստուծոյ, տանից դուս գալ չունինք, ամիսը հազիւ մի անգամ բարեկամի երես ենք տեսնում, այն էլ մի քիչ չըխօսենք։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ո՞վ է ասում չըխօսէք, կարող էք խօսել, նախ՝ ոչ երեխայոց մօտ, երկրորդ՝ բարի բաների մասին և ոչ թէ ափեղ-ցփեղ։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Դէհ, տիկին ջան, կարգալ չը գիտենք, ուսում չունենք, նստում ենք՝ սարից, ձորից խօսում, ժամանակ անց կացնում։ Դէ դու ասիր, տիկին ջան, ինչ անենք։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ա՛յ, ես քեզ ասեմ ինչ անէք, եթէ միայն ինձ լսէք.—փոխանակ զանազան բամբասանքներով և անմիտ խօսակցութիւններով զբաղուելու, անդամ գրուեցէք տեղւոյս Նորակազմ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան. դորանով, նախ՝ մի բարի գործ կատարած կը լինիք, երկրորդ՝ անուն հանած—լրագրներում կը գովեն ձեզ . . . Դուք, փառք Աստուծոյ, հարուստ էք և դիրք ունեցող, կարող էք լաւ հանգանակութիւններ անել և ոյժ տալ ձեր դպրոցն աւելի ևս բարձրացնելու։ Ահա, տիկին Վարսենիկն էլ անդամ է և լաւ, օգտակար անդամ։

Տ. ԳՈՀԱՐԻԿ.

Տիկին ջան, ինչքան պէտք է տանք, որ մենք էլ ... ՝ լինինք։

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

(*Ծիծաղելով*) Ատամ չէ—է, տիկին Գոհարիկ, անդամ—է։

Հ.Ս.Խ. ՀԱՅԿՈՄԻՏԻՆ ... Գրադարան
7/XI-1922
Ա. ՄԱՍԻՍ

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Դէ հա, ապամ էլի։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ինչքան կարող էք,—մէկ, երկու, երեք, հինգ, տաս թուման, ով ինչքան կարող է։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Տիկին ջան, ես տարեկան հինգ թուման կը տամ, խնդրում եմ ինձ էլ ատամ դրէք։ Բայց ասում էք, տիկին ջան, կազէթումը կը գովեն, հա . . .

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Եթէ դուք օգտակար անդամ լինիք; ի հարկէ կը գովեն։ Դէ, ներողութիւն, ես կամենում եմ գնալ, իմ վերարկուս և գլխարկս։

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Էս բոպէիս։ (Դուրս է գնում)

Տ. ՎԱՐՍԵՆԻԿ

Տիկին ջան, այս լաւ եղաւ, մի նոր անդամ էլ գտար։

Տ. ԱՐՇԱԼՈՅՍ

Ես այնքան չեմ հետաքրքրուում նորա անդամակցութիւնով, որքան՝ զուցէ նա գործի մէջ մտնելով խելքի դայ և թողնի իւր բամբասանքները։ (Ներս է մտնում տ. Գոհարիկ)։

ՏԵՍԻԼ Ե.

Տ. ԳՈՀԱՐԻԿ

Տիկին ջան, խնդրում եմ այս անդամ ներես Զուշանիկիս, մեղաւորը իսկապէս ես եմ եղել, եթէ միւս անդամ այդպիսի մի բան լսես, ինչ ուզում ես՝ ասիր։ Ինձ էլ, տիկին ջան, ատամ դրիր, ես կաշխատեմ փող էլ հաւաքել, ինչ-որ ասէք՝ կանեմ։

ՆԱԲԱԹ-ԲԱՋԻ (տեղից վեր կենալով)

Քու անբմբն էլ կազէթմբմբ կը տրտրպեն . . . Վարժուհին ջան, թաքի մին բան անես՝ իմ անբմբն էլ կազէթբմբ տրտրպեն . . . այ լաւ կինէ. հա վալլա, հա . . .

ՎԱՐԱԳՈՅՐ

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԽԱԹԱՑ ՉԷ

ԿԱՏԱԿ· ՄԷԿ ԱՐԱՐԻԱԾՈՎ

Առաջին անգամ խաղացել են Ռաչտի Ս. Մեսրովբեան Դպրոցի աշակերտ
Ները 1900 թ·ին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Պ. Յովհ. Դօվլաթեան, ուսուցիչ—Վարդան Յովհաննէսեան
Մատթէոս Մուրադեան, աշխա-
տասէր, բարի և ընդունակ աշակ.—Վահրամ Պետրոսեան
Ստեփաննոս Վարդանեան, Մատ-
թէոսի մրցակից ընկերը — —Լեւոն Կարապետեան
Իսահակ Ղուկասեան, աշխոյժ և
չարաճճի աշակերտ — — —Աղէքսանդր Հոլոմեան
Մինաս, Մատթէոսի հայրը, գա-
ղաղցի տգէտ ծերունի — —Աբրահամ Տէր-Պետրոսեան

Բեմը ներկայացնում է ծխական դպրոցի ուսուցչական սենեակը

ՏԵՍԻԼ Ա.

Պ. Դօվլաթեան նստած լրագիր է կարդում. լսում է դրսից դպրոցի զալթում խաղացող մանուկների աղմուկը։ Վազելով ներս է ընկնում Իսահակը, հագուստի կօճակները բաց, երեսն ու ձեռքերը թանաքոտած, աչքերն երբեմն վայրենաբար բաց անելով, երբեմն կուչ ածելով։ Խօսակցութիւնն սկսում է ամենաբարձր նօտից եւ աստիճանաբար ցածրացնելով վերջանում։ Խօսելիս անդադար ձեռքերը շարժում է։

ԻՍԱՀԱԿ

Պարոն Դօվլաթեան, տեսէք, ը՛ . . . ը՛ . . . այդ Ստեփաննոս Վարդանեանին. ես ինձ համար դաս էի սովորում, եկաւ գլխիս այնպէս խրեց, (*ձեռքը քսելով գլխին*) որ ուռել է։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ես քեզ էլ եմ ճանաչում, Ստեփաննոսին էլ. (*ակնոցների բարձրից նայելով*) Նա այդպիսի բան չէր անիլ։

ԻՍԱՀԱԿ

Հարցրէք բոլորը աշակերտներին, պարոն Դօվլաթեան, ես ոչինչ չեմ արել։ Նա շատ անդամ է ինձ ծեծել, բայց ես խղճացել և չեմ դանդատուել ձեզ։ (*Ձեռքը քսելով իբր ցաւող ճակատին*) Ո՛ւֆ . . .

Պ. ԴՈՎԼԱԹԵԱՆ

Այդ ինչ է, այ տղայ, ծածկիր փորդ, քեզ կանոնաւոր պահել չը գիտես, չես ամաչում։ Այդ ինչ է երեսիդ մուրը. այսօր երեսդ չես լուացել։

ԻՍԱՀԱԿ

Լուացել եմ, պարոն Դովլաթեան (*ամօթ եւ երկիւղ ձեւացնելով*)։

Պ. ԴՈՎԼԱԹԵԱՆ

Ապա ինչու՞ ես այդպէս մրոտած։

ԻՍԱՀԱԿ

Թանաքը վատ է, պարոն Դովլաթեան, ծծում է։

Պ. ԴՈՎԼԱԹԵԱՆ

Ծծում է . . . երեսիդ հօ չես գրում, որ . . .

(*Մտնում է Մատթէոս*)

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՏԹԷՈՍ

Պարոն Դովլաթեան, Իսահակն այնպէս զարկեց Ստեփաննոսին, որ կպաւ պատին և քթից սկսեց աղբիւրի պէս արիւն վազել։

ԻՍԱՀԱԿ (*աչքերը շուռ ու մուռ տալով Մատթէոսի վերայ եւ լաց լինել ձեւացնելով*) Սուտ է ասում, պարոն Դովլաթեան, բոլոր աշակերտները թշնամացել են ինձ հետ և սուտ-սուտ բաներ են հնարում ինձ պատժել տալու համար։

Պ. ԴՈՎԼԱԹԵԱՆ

Ա՛յ չարաճճի, դորա համար ես շտապել առաջ ինքդ գանգատելու։

(*Ներս է մտնում Ստեփաննոս երեսը լուացած*)

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Պարոն Դովլաթեան, չը գիտեմ ես ինչ եմ արել այդ Իսահակին. երեկ տեսայ մի թուրք տղայի հետ ծեծկլտում էր, գնացի ազատեցի, փոխանակ շնորհակալ լինելու . . .

ԻՍԱՀԱԿ

Դուք էլ հաւատում էք դրան, պարոն Դովլաթեան, սուտ է ասում, իրանից է հնարում։

ՄԱՏԹԷՈՍ

Հէնց այդ ճակատի ուռուցքն էլ այնտեղ է ստացել, պարոն Դովլաթեան։

ԻՍԱՀԱԿ (*դառնալով Մատթէոսին եւ աչքերը սպառնալից շուռ ու մուռ տալով*) Դու այնտեղ էիր, որ խօսում ես։

Պ. ԴՈՎԼԱԹԵԱՆ

Անպիտան, ապա ասում էիր, իբր, Ստեփաննոսն է քեզ խրճել։

ՍՏԵՓԱՆՆՈՍ (*զարմացած ձիծաղով*) Ես խրեցի՞. . .

ԻՍԱՀԱԿ

Այո՛, հա՛, հէնց դու։

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ձայնդ կտրիր, ստահակ, բաւական չէ չարութիւն ես արել, խրել ես նրան, թոյլ ես տալիս զրպարտութիւն էլ անել: Գնա կորիր, այսօր ճաշից կը զրկւես։

ԻՍԱՀԱԿ (կեղծ լացով)

Ախար ինչ եմ արել, պարոն Դօվլաթեան:

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Այն, որ հազար անգամ քեզ պատուիրել եմ և դու հակառակ իմ պատուէրիս, դարձեալ թուրք երեխայոց հետ ես ընկնում, նրանց հետ ազմուկներ սարքում։ Հայ երեխան, դպրոցի երեխան երբէք թոյլ չը պիտի տայ իրեն փողոցային թուրք երեխայոց հետ խօսել անգամ, ուր մնաց . . . Բայց, ասած-չասած քեզ համար մի և նոյնն է։

ԻՍԱՀԱԿ

Պարոն Դօվլաթեան, ես մեր խանութի առաջ նստած էի միամիտ . . .

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Միամի՞տ . . . էլ ինչ ասել կուզի։

ԻՍԱՀԱԿ

Միամիտ նստած էի. մեր հարևանի տղայ Յուսէյնը եկաւ ղլխիս պէնդ խրեց, ես էլ նրան խրեցի։

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Բայց, դու ի՞նչ գործ ունէիր խանութում:

ՄԱՏԹԷՈՍ

Ամեն օր, պարոն Դօվլաթեան, հէնց դպրոցից արձակւում է թէ չէ՝ վազում է խանութ։

ԻՍԱՀԱԿ

Ես չեմ գնում, մայրս է ուղարկում։

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ի՞նչ անուն պէտք է տալ ծնողների այդ վարմունքին. փոխանակ իրենց զաւակների դաստիարակութեան մասին հոգալու, փոխանակ խնամելու և պաշտպանելու նրանց փողոցի վատ ազդեցութիւնից, իրենք են շպրտում նրանց այդտեղ և այդպիսով իրենց զաւակներին բարոյապէս մորթոտում . . . (Դառնալով նրան) Այ տղայ, ես քեզ հազար անգամ չեմ պատուիրել, որ խանութ չերթաս. անցեալ օրն էլ հօրդ չը կանչեցի՞ և նոյն պատուէրը չը տի՞։ Դէ կորիր, կորիր, այսօր ճաշին կը մնաս։

ԻՍԱՀԱԿ (կեղծ լացով)

Էլ չեմ անի, պարոն Դօվլաթեան, այս անգամ ներիր. բոլորն էլ ինձ հետ թշնամ . . .

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Հազար անգամ ներել եմ, բայց այդ ոչ քեզ

վերայ է աղղեցութիւն արել, ոչ էլ . . . Մատթէոս, դու սպասիր, քեզ հետ գործ ունիմ: (*Իսահակն ու Ստեփաննոսը գնում են: Շեմքում Իսահակը հրում է նրան*):

ՏԵՍԻԼ Գ.

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Մատթէոս, երկար աշխատելուց, բաւականին նեղութիւններ կրելուց յետոյ, վերջապէս կարողացանք իմ և հոգաբարձութեան բաղձանքներն իրագործել: Օ՜հ, որքան պիտի ուրախանաս:—Արդէն Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի հոգաբարձութիւնն յարգել է մեր խնդիրը և վճռել է այստեղից մի աշակերտ ընդունել գիշերօթիկ: Հոգաբարձութիւնն ու ես որոշել ենք քեզ ուղարկել: Տեսնում ես, սիրելիս, ինչ է նշանակում աշխատասիրութիւն: Եթէ դու բարի, աշխատասէր և խելօք աշակերտ չը լինէիր, այսօր այդ բախտը քո փոխարէն մի ուրիշ աշակերտի կը վիճակուէր: Դէ, գնա հայրիկիդ յայտնիր այս բարի լուրը և պատրաստուիր վաղը ճանապարհուելու, Թիֆլիս գնացողներ կան: Աշխատիր, սիրելիս, այնտեղ էլ յառաջադէմ լինել և ուսուցիչներիդ սիրելի. հաւատացած եղիր, որ մի քանի տարիներն իրար ետեից կը թռչեն և դու

մի կրթուած ու զարգացած մարդ դարձած՝ կը դաս ծառայելու այն հասարակութեան, որ քո բախտաւորութեան պատճառ դարձաւ:

ՄԱՏԹԷՈՍ (ուրախ)

Սիրելի ուսուցիչ, որքան բախտաւոր եմ. . . ես երբէք չըպիտի մոռանամ ձեր բարերարութիւնը:

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Դէ, դնա պատրաստութիւնդ տես, շորերդ լանալ-պատրաստել տուր, որ վաղն անպատճառ ճանապարհուես: (*Մատթէոսն ուրախ-ուրախ դուրս է վազում, իսկ պ. Դովլաթեան վերցնում է լրագիրն եւ կարդում*):

ՏԵՍԻԼ Դ.

(*Ներս է մտնում Ստեփաննոսը եւ լուռ կանգնում դրան մօտ*).

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Հը՞, Ստեփաննոս, ինչ կայ: Չես խօսում. մօտ եկ տեսնեմ ինչ ես ասում: Լաց ես լինում. վերջապէս ասիր տեսնեմ ինչ է պատահել:

ՍՏԵՓԱՆՆՈՍ (հեկեկալով)

Մթթէ ես ծոյլ և անպիտան աշակերտ եմ:

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Քեզ ով ասաց, թէ՝ վատ աշակերտ ես:

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Ինչու՞ ապա ինձ էլ չէք ուղարկում Թիֆլիս։ Մատթէոսը հայր ու մայր ունի, իսկ ես որբ եմ. ես խոստանում եմ ձեզ՝ շատ աշխատել, դասերս շատ լաւ սովորել։ Դուք կարող էք այնտեղի իմ ուսուցիչներից հարցնել, եթէ վատ սովորեմ՝ կարող էք յետ բերել տալ։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Մի նախանձիր, սիրելի Ստեփաննոս, ճիշտ է, Մատթէոսը ծնողներ ունի, բայց նրանք այնքան էլ միջոցներ չունին, որ կարողանան նրան կըթուլթեան տալ։ Մի նախանձիր Մատթէոսին, աշխատիր նրան հասնել և ես խոստանում եմ եկող տարի էլ ամեն կերպ աշխատել քեզ ճեմարան ուղարկելու։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Ստուած վկայ շատ կաշխատեմ, պարոն Դովլաթեան, գիշեր-ցերեկ կաշխատեմ. եթէ հիմա Մատթէոսից փոքր ինչ յետ եմ՝ պատճառն այն է, որ ես՝ և՛ դասերս եմ սովորում, և՛ մօրաքրոջս տանը թեթև ծառայութիւններ անում, իսկ այնտեղ՝ ազատ կը լինիմ ծառայութիւններից և կաշխատեմ տասն անգամ լաւ սովորել դասերս և ամեն տարի դասարանս փոխել։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ես հաւատում եմ քեզ, Ստեփաննոս, բայց հաւատացած եղիր, որ այլ ես անկարելի է վճիռը փոխել. արդէն որոշած է Մատթէոսին ուղարկել և այդ որոշումն հաղորդուած է Ներսիսեան Դպրոցի Վարչութեան։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Խնդրում եմ, պարոն Դովլաթեան։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Եկող տարի, քեզ էլ եկող տարի։ (Ստեփաննոսը հեկեկալով դուրս է գնում)։ Օ՜հ, եթէ ես միջոցներ ունենայի, չէի թոյլ տայ, որ այս երեխան արտասուքներ թափէր։ Բայց ի՞նչ դիւրազգած սիրտ է ունեցել։

ՏԵՍԻԼ Ե.

ՄԻՆԱՍ (դրսից)

Վրուժբպետը ըստեղ ա՞ . . .

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Հրամեցէք։

ՄԻՆԱՍ (մտնելով Մատթէոսի հետ)

Բրուի աջողում, վրուժբպետ ջան, լաւ ը՞ս, դինջ ը՞ս. Ըստծուն փառը, մունը լեաւ ընը։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Հրամեցէք, նստեցէք, պարոն Մինաս։

ՄԻՆԱՍ

Ըսէնց էլ լհա դինջ ա, սօրուն ա, սաղ ինիս։ Է՜. . . վրուժբպետ ջան, ախար էս ինչ ա լհա էս տղէն աֆալս կտրալ։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ (քմծիծաղով)

Հ՜ը, ինչ խաբար է, պարոն Մինաս։

ՄԻՆԱՍ

Ցիս յինչ ըմ գիտըմ, աղպէր, կպալ ա եախաս, թա իլլահ-բիլլահ յիս Թֆլիզ ըմ էրթլական, թա յինչ ա՝ օսըմ առնըմ, կասաս պիտմա կթղրկոս դէռնայ եա սրբըզան։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ինչու, պարոն Մինաս, միայն կաթողիկոսն ու եպիսկոպոսը պէտք է ուսում ունենան։ Ապա դու չես ուզի, որ քո որդիդ էլ կրթուած, օրինաւոր մարդ լինի։

ՄԻՆԱՍ

Ցիս օզըմ ըմ, լհա իմ տղէն մին քիչ գրին սեն ու սիպտակը ջոկի՝ պռծաւ, գնաց։ Եանի վրուժբպետ ջան, ըղմրթ ա ասըմ Մաթոսս, եա իմ բէրանն ա չափլական։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Բայց չէ՞-որ մենք չորս-հինգ ամիս առաջ այդ բանի մասին խօսեցինք և դու համաձայնուեցիր. հիմա երբ արդէն խոշնդոտները ոտ-

նատակ տալով՝ հազիւ հազ յաջողել ենք, կամենում ես արգելք լինել։

ՄԻՆԱՍ

Ա՜յ քը մատաղ, վրուժբպետ ջան, յիս լհա ես ամ խօսք տալ։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ի՞նչպէս թէ՝ երբ եմ խօսք տուել. հինգ ամիս առաջ քեզ հողաբարձական ժողովին չներկայացրինք, չյայտնեցինք քեզ այդ բանը և դու էլ նոյն իսկ շնորհակալութիւն չը յայտնեցիր։

ՄԻՆԱՍ

Եանի վրուժբպետ ջան, էն վախտը լհա դուք մին հաստատ պէն ասիք։ Ասիք լհա պիտմա կիրենք Թֆլիզ, գիտում չըմ էլ ինչ ու ինչ, յիս էլ լհա ասի՝ տենունք,—կրակն ընկայ։

(Մատթէոսը ձեռքի շարժումով զգուշացնում է հօրը, իսկ նա աչքերը ոլորում)։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Եղբայր, ինչո՞ւ ես խօսում, ինչ կրակն ընկնելու բան կայ. որդուդ ձրի ուղարկում ենք ուսում առնելու, դու փոխանակ շնորհակալ լինելու՝ ինչո՞ւ ես ասում։

ՄԻՆԱՍ

Չէ՛, վրուժբպետ ջան, դու ինիս քու Աստծը իմ ըրեխուց ձեռը եկալ. յիս, սարի նման

գլխին կանգնած՝ յունց կը թողամ լհա ի
խօխան սարէսար ընկնի, խալխին դռներա
ընկնի։ Լհա ինձ հմա էլ ամօթ ա, ես էլ լհ
մին մարդ ամ ինձ հմա։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Ինչեր ես ասում, եղբայր, հասկացիր է. երե
խայիդ չենք ուղարկում ծառայութիւն անի
լու, ուղարկում ենք, որ կրթուի, ուսում առնի
մարդ դառնայ։

ՄԻՆԱՍ

Խի-որ, լհա յիս որ օսըմ առած չըմ՝ մառթ չըմ

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Լաւ մարդ ես, պարոն Մինաս, բայց եթէ
ուսում առնէիր՝ աւելի լաւ մարդ կը լինէիր

ՄԻՆԱՍ

Եանի խի-որ, լհա քիթս էր փոխալակմն։

ՄԱՏԹԷՈՍ

Հայրիկ, ես ուզում եմ գնալ, մի արգելիր։

ՄԻՆԱՍ (թեթև հրելով նրան)

Լհա սասրդ կըռիր, գեադ . . .

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Լսիր, պարոն Մինաս, ի զուր տեղը քո որ
դուդ բախտին քար մի ձգիր, հաղարից մէ
կին հազիւ է այսպիսի բախտ վիճակւում։
Մատթէոսը լաւ տղայ է, ես համոզւած եմ,

որ մի քանի տարի Ներսիսեան Դպրոցում կե-
նալով՝ մի օրինաւոր մարդ կը դառնայ։

ՄԻՆԱՍ (թախանձագին)

Վրուժըպետ ջան, լհա դու ինիս քու Աստծը,
էդ խաթէն իմ գլխան դաֆ արա. չունքի
լհա ձեզնայ ըրէխայ—մոնթ ան ուզալ, մին
անտէր եթիմից զատից ճարէք, օրօղէք, իմ
խօխան լհա իմ ձեռան հանիլ մէք։ Վրուժը-
պետ ջան, լհա տուր էդ ձեռնդ, էդ ոննդ պա-
չեմ, թաք իտի կրական իմ ըրեխուն ըզա-
տես, դար բէ դարը զցես վէջ։

ՄԱՏԹԷՈՍ (ցածը)

Հայրիկ, խնդրում եմ արգելք մի լինիր, ես
ուզում եմ գնալ, ես ուզում եմ . . .

ՄԻՆԱՍ

Դօն մին մենծ զալաթ ըս անըմ։

ՄԱՏԹԷՈՍ

Այդպէս կոչտ մի խօսիր, ամօթ է։

ՄԻՆԱՍ

Արա, ասամ վէջ՝ սասրդ կըռի, եօխսա վէր
ամ կէնլական, լհա կաշիդ մաշկամ հա։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Եղբայր, երևի դու մի ուրիշ կերպ ես մտա-
ծում . . . Թիֆլիզում Հայոց մի մեծ ու-
սումնարան կայ, ես էլ այնտեղ եմ սովորել,

ով որ այնտեղ կրթուի՝ մի օրինաւոր մարդ կը դառնայ, հասկացար . . .

ՄԻՆԱՍ

Խէ՛, վրուժըպետ ջան, լհա էնքան էլ ախմախ հօ չըմ։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Լաւ, օղորմի հօրդ, դէ՛ քո որդուդ էլ ուղարկում ենք այնտեղ, որ ուսում առնի, կրթուի, մարդ դառնայ ու գայ քո տունդ։

ՄԻՆԱՍ (կողմ՝)

Ա՛յ կարաս խաբիլ հա՛ . . . Ախբր, վրուժըպետ ջան, ամօթ ասիլ, հեռ լսողաց, մունք էլ լհա կնկայ օղլուշաղի տէր ընք. Մաթոսիս մէրն ասըմ ա՝ լհա խօխէս մին սհաթ աչքիցս զատուել ա, սիրտս կը պտառուի։ Լհա մին համնցի, վրուժըպետ ջան, մեր տօնը, մին տես՝ ինչ լաց ու շիւանը բռնալ ա։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Չը գիտեմ, իսկապէս, ինչ անուն պիտի տալ ձեր այդ վարմունքին։

ՄԻՆԱՍ

Օղըմըս լհա ե կաց ըստեղ ինձ մին լէ՛ւ թակի, վրուժըպետ ջան, թաք էդ պէնը անիլ մի, էդ ստանի շառան իմ խօխուս եախան ըզատի, ա՛ քը մատաղ։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Տես, պարոն Մինաս, կը զղջաս, բայց արդէն անցած կը լինի։

ՄԻՆԱՍ

Խէ՛ ըմ փոշմանըմ, յիս զալմթ ըմ արալ, լհա իմ խօխուցը ձեռն ամ ե կալմ . . .

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Իսկապէս ես մնացել եմ ապշած, թէ տակաւին աշխարհումս ո՞րպիսի մարդիկ կան։

ՄԻՆԱՍ (առանձին)

Պահ, ամա խօսըմ ա հա՛, լհա էս վրուժըպետներան ջհակն էլ ջհակ ա հա՛. . . (նրան) Քե տօղրուսի, վրուժըպետ, լհա յիս իմ խօխան քուչըմը քթալ չըմ, տալ չըմ. խաթրաւ ասամ, տեսամ ըլլըմ չի, յիս լհա էնդաղար էլ ախմախ չըմ, վէր գիտըմ ըք։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Չը գիտեմ դրանից աւելին ինչ պիտի լինէիր. և դուք էլ ձեզ ծնողներ էք կոչում։

ՄԻՆԱՍ (բարկացած)

Խէ՛. . . յո՛ւան ըմ պրկաս։ (վեր է կենում՝) Եանի դուն լհա մին գիրին սեն ու սիպտակը ճընաչըմ ըս՝ մարդ դէռար, մունք հէյվան . . .

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Եղբա՛յր, ես կաւելու ո՞չ տրամադրութիւն ու-

նիմ, ոչ էլ միջոց։ Ձեզպէսների հետ խօսել՝ նշանակում է ժամանակ մեռցնել։

ՄԻՆԱՍ

Ինձ ըս օգըմ մեռցնիլ, ենի ըշխարին տէրը դուն ը՞ս, լհա յիս իմ խօխան տալ չըմ, զօռ ա։

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Գնա, եղբայր, գնա բանիդ, ես ժամանակ չունիմ քեզ հետ վիճաբանելու։

ՄԻՆԱՍ

Լհա էն որ տարին էրկու-իրեք խետ մին պծար թղթին երայ կիրած տաս ըս խօխուն ձեռնը՝ հինգ դռանաւ, տասն դռանաւ օգըմ ըս, լհա էն վօխտը ժամանակ ծը՞ս . . .

ՄԱՏԹԷՈՍ

Հայրիկ, մի քիչ քաղաքավարի խօսիր։

ՄԻՆԱՍ

Սասրդ կըռի, ա զօղուդ, ընկի ըղաքս, (թեւից քաշելով) եալլա. . . (Գ. Դօվլաթեանին) Լհա քու վըռժատօնդ էլ բարբաթ ըլի, դու էլ խետին։ (Հրելով դուրս է տանում որդուն)։

ՄԱՏԹԷՈՍ (դրսից)

Ի՞նչ ես դալմաղալներ սարքել, չես հասկա...

ՄԻՆԱՍ

Ասամ վէչ սեասրդ կռի, դեադ, եօխսա մնակիս տակն կըտամ, լհա ոնն ու գլօխդ կդդամ։

ՏԵՍԻԼ Զ.

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ (միայնակ)

Դէ, եկ ու այսպիսի մարդկանց համար նահատակուիր. . . Եւ մի՞թէ հայ ուսուցիչ լինել՝ նահատակուել չի՞ նշանակում . . . Աշխատիր, տանջուիր, չարչարուիր և փոխանակ գոհունակութեան՝ զանազան Մինասների լուտանքներին արժանացիր։ Ե՞րբ պէտք է մենք, հայերս էլ մարդ դառնանք, հասկանանք մեր չարն ու բարին և ազգերի շարքը մտնենք։

(Ներս է վազում Դահակ)

ՏԵՍԻԼ Է.

ԴՍԱՀԱԿ

Պարոն Դօվլաթեան, ես նստած ինձ համար դաս էի սովորում, ոչինչ չէի խօսում, անմեղ տեղը Ստեփաննոսն եկաւ քացով զարկեց կողքիս, քիչ մնաց ուշաթափուէի։ (Կողքը բռնելով)

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Տօ դէ կորիր է, ես գիտեմ դու ինչ պտուղ ես։

ԴՍԱՀԱԿ (դժգոհութեամբ)

Միշտ Ստեփաննոսին էք հաւատում։

Գ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Հագուստդ ուղղիր, անկարգ, ինչ ես կրկին փորդ բաց եկել՝ առաջս կանգնել, կորիր։ Հա, Ստեփաննոսին կանչիր։ (Դահակը գնում է)

ԻՍԱՀԱԿ (դրսից)

Ստեփաննոս, Ստեփաննոս, համեցէք, կանչում է, դու էլ ճաշից կըզրկուես, միասին կըմնանք։

ՏԵՍԻԼ Ը.

ՍՏԵՓԱՆՆՈՍ (երկիւղած ներս մտնելով)

Հաւատացէք, պարոն Դօվլաթեան, ես ոչինչ չեմ արել . . . Իսահակը . . .

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ (ընդհատելով)

Լսիր, Ստեփաննոս, դու քո որբ տեղովդ աւելի բախտաւոր ես, քան խեղճ Մատթէոսը։ Դնա պատրաստուիր ինձ տես, որ վաղը պէտք է քեզ ուղարկեմ Թիֆլիզ։ (*Ստեփաննոսը զարմացը է արտայայտում*)։ Ի՞նչ ես զարմացել, որոշեց քեզ ուղարկել Ներսիսեան Դպրոցը. ինչպէս երևում է՝ բախտը յաջողում է քեզ։ Դնա, Աստուած քեզ հետ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ

Իմ անգին ուսուցիչ, որքան բարի էք։ (*Մօտենում եւ համբուրում է նրա ձեռքը*)։

Պ. ԴՕՎԼԱԹԵԱՆ

Դնա, սիրելիս, ես յուսով եմ, որ դու մի օրինաւոր մարդ դարձած կը գաս հայրենիք՝ գործելու և տանջելու։ Դնա, ապացուցիր, որ կրթութիւնը խաղայ չէ՝, այլ՝ բան է։ Աստուած քեզ հետ։

ՎԱՐԱԳՈՅՐ

7/XI-1922
ИМЕНИ Маслиева
Մ ԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0399793